16202

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«27» 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0200-22

Ձեռնարկողը՝ *«Նորիկ 70» ՍՊԸ*
Ք. Երևան, բաշինջաղյան փ, 99գ.

Գործունեությունը՝ *Պռոշյան համայնքի Գ. Չաուշի խճուղի թիվ 1/47 և 1/48 հասցեներում նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
Կոտայքի մարզ,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0200-22

«27» 12 **2022թ.**

Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Գ. Չաուշի խճուղի թիվ 1/47 և 1/48 հասցեներում նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցման նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Նորիկ 70» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Պռոշյան բնակավայր

Ներածական մաս. Առևտրի կենտրոնի նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզ, Պռոշյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի թիվ 1/47 և 1/48 հասցեներում: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից առևտրի և ժամանցի կենտրոն:

Հողամասի նպատակային նշանակությունը, կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի, այն է՝ 1500 քմ-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21012021-07-0096 և N 22012021-07-0012 վկայականները, ինչպես նաև Կոտայքի մարզի Նաիրի համայնքապետարանի կողմից տրամադրած N CPPO-0000-1937 20.07.2022թ ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Տարածքում կազմակերպվել է շինարարական հրապարակ և իրականացվել են մասնակի շինաշխատանքներ: Հայտի փորձաքննական աշխատանքներն իրականացվում են հիմք ընդունելով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի վարչական տույժ նշանակելու մասին N-11/74-Ա որոշումը:

Շինությունը բաղկացած է երկու մասերից, որից մեկը՝ առաջնայինը, երկհարկանի է, մասնակի երրորդ հարկով, իսկ մյուսը՝ ետնամասինը, երկհարկանի է: Շինության համար նկուղային հարկ նախատեսված չէ, ուստի բոլոր պահեստային տարածքները զետեղված են առաջին հարկում: Ավտոկայանատեղին բացօդյա է: Նախագծվող շինության չափերն են 145,2մx109,2մ: Առաջնային շինությունում առաջին և երկրորդ հարկերում 5.1մ, երրորդ

հարկում 3.8մ հարկի բարձրություն, ետնամասի շինությունում առաջին հարկի բարձրությունը 5.1մ է, երկրորդ հարկում մասնակի 3.8մ և 6.5մ է: Շինությունը միաձույլ ե/բետոնե և մետաղական ստրուկտուրային կոնստրուկցիաների հիմնակմախքից է: Կաթսայատունը, ինչպես նաև բոլոր հիմնական ինժեներական սարքավորումները նախատեսված են երրորդ հարկում: Բացօթյա ավտոկայանատեղին նախատեսված է 170 մեքենայի համար, զբաղեցնում է ասֆալտապատ 4486,0քմ տարածք: Հարկերի միջև հաղորդակցությունները իրականացված են աստիճանավանդակների, վերելակների և շարժասանդուղքների միջոցով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 1200խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Պռոշյան համայնքի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Առևտրի կենտրոնի նախագիծը մշակվել է հաշվի առնելով ՀՀ գործող բոլոր քաղաքաշինական և հակահրդեհային նորմերը, նախատեսված են էվակուացիոն ելքեր դեպի դուրս, ինչպես նաև միջոցառումներ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար:

Տարածքի տեխնիկական ցուցանիշներն են.

-Հողի ընդհանուր մակերես՝ 2.1031հա և 1.673հա,

-Նոր կառուցվող մասնաշենքերի /առևտրի կենտրոն/ զբաղեցրած տարածք ներառյալ աստիճան և թեքուղի՝ 16450քմ,

-Կանաչապատման մակերես՝ 12060քմ,

-Կառուցապատման մակերես՝ 9251քմ:

Առևտրի կենտրոնում նախատեսվում է իրականացնել կենտրոնական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է տեղադրել տանիքում և շենքի ետնամասում քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Հետիոտների անվտանգությունն ապահովելու նպատակով շինհրապարակն անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով: Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցին, ինչպես նաև ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից: Շինարարությունը կարելի է իրականացնել ամբողջությամբ

եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում:

Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,

Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 31.5տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1180խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Առևտրի կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <Վեոլիա ջուր> ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը կիրականացվի Գ.Չաուշի խճուղի նրբ 1/48 տարածքով անցնող d=400մմ և d=800մմ ջրատար խողովակները շրջանցելուց հետո՝ շրջանցվող ջրատարից: Առաջացող հոսքաջրերի մաքրումը կիրականացվի կենսաբանական մաքրման կայանում: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Բիոզուգարանների սպասարկումը պայմանագրային հիմունքներով իրականացվում է մատակարար կազմակերպության կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

- Շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
-աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
-անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
-Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Կոտայքի մարզի Պռոշյանի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

-Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

-Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

-Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին:

-Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

-Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Նորիկ 70» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզ Պռոշյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի թիվ 1/47 և 1/48 հասցեներում նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյան